

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական հանդեսը հիմնուած է 1866-ին, պաշտօնաթերթն է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ լոյս կ'ընծայուի Սրբոց Յակոբեանց Տպարանէն:

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական նիւթերէ զատ, կ'ընդգրկէ նաեւ պատմական, եկեղեցական, լեզուական եւ հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններ եւ այլ բնոյթով նիւթեր:

Յօդուածները կ'ընդունուին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով, նախընտրաբար 10-15 համակարգչային շարուածքով լման էջ՝ Word միջավայրին մէջ (Word 2007-2019), երկու կողմերէն հաւասարեցուած, առանց տողադարձերու, ծաւալը՝ A4 ֆորմատի, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 12 pt, տողերու հեռաւորութիւնը՝ 1.15 pt: Յղումներու տառատեսակը եւս պէտք է ըլլայ՝ Arian Grqi, տառաչափը՝ 10 pt: Հայերէն յօդուածները «Սիոն»-ի մէջ կը հրատարակուին դասական հայերէն ուղղագրութեամբ: «Սիոն»-ին յանձնուած յօդուածները պէտք է ըլլան անտիպ:

Մեր սրտագին բաղձանքն է որ «Սիոն» մուտք գործէ բոլոր հայ տուններէ ներս. Վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ գրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին եւ նախասիրութեան:

Յօդուածներ եւ այլ թղթակցութիւններ, ուսումնասիրութիւններ պէտք է ուղարկուին «Սիոն»-ի հետեւեալ հասցէով.

E-mail: sionjournal@yahoo.com

